

ՄԻՍՈՆ ԵՐԵՄՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍԱՏՈՒՐ ՓԱՇՏԱՅԱՆ

Մխիթարյան միաբանության վաստակաշատ գործիչներից ոչ բոլորն են հավուր պատշաճի գնահատված ու մեծարված: Նման անհատականություններին է Վենետիկի Մխիթարյան միաբանության անգամ, տաղանդաշատ բնագետ, հանրագիտակ, գրող, գրականագետ, խմբագիր և գեղագետ Սիմոն Երեմյանը:

Ծնվել է 1871 թ. հոկտեմբերի 30-ին Տրապիզոնում, ուր և Մխիթարյանների հիմնադրած վարժարանում¹ ստացել է նախնական կրթություն: Ուսումնաստենչ և աչքաբաց պատանին վարժարանն ավարտելուց հետո ուղարկվել է Վենետիկի Սուրբ Ղազարի կղզու վանք, ուր աշակերտել է Հայր Եվգենիոս վարդապետ Ոսկանյանին: 1895-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա և դարձել հիշյալ միաբանության անդամ²: Նույն թվականին էլ Սուրբ Ղազարի վանքի դպրոցում դասավանդել է բնագիտական առարկաներ: 1916–1918 և 1920–1921 թթ. Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանի տեսուչն էր: Եղել է նաև Սուրբ Ղազարի վանքի Մխիթարյանների հիմնադրած տպարանի տեսուչ: Շուրջ 45 տարի վարել է գիտամանկավարժական բուռն և բեղմնավոր գործունեություն: 1930-ականների սկզբին հեռացել է Մխիթարյան միաբանությունից. «Անկախ կապրեմ Միլանի մեջ, դասավանդություն մե օրապահիկը հազիվ շահելով»³: Միլանում էլ, 67 տարեկանում, 1938-ին հանկարծամահ է եղել:

Մխիթարյան միաբանությունից Ս. Երեմյանի հեռանալու պատճառները ցարդ անհայտ են: «Հ. Պոտուրյանի հոգվածեն կիմանամ զարմանքով ու ցավով, – դրում է Ա. Չոպանյանը, – որ Հ. Ս. Երեմյան վերջին տարիներս հեռացած է եղեր Հ. Ս. Ղազարու վանքեն (հայտնի է, ի՞նչ պատճառով) ու թշվառություն մեջ կր քաշկուտե եղեր իր կյանքը»⁴:

Ս. Երեմյանի Մխիթարյան միաբանությունից հեռանալու պատճառները մեկնաբանումը դուրս է մեր առջև դրված խնդիրներից, սակայն չենք կարող չանդրադառնալ այդ առթիվ Ռ. Գաբրիելյանի⁵ արտահայտած կարծի-

¹ Ինչպես վկայում է Գ. Ստեփանյանը. «Պատահական է, որ Մխիթարյան միաբանները Պոլսից իրենց գլխավոր ուղադրությունը դարձրել են Տրապիզոնի վրա, անշուշտ առաջին հերթին այդ քաղաքը համարելով Հայաստան ներթափանցելու միջոց: Դեռևս 1840-ական թվականներին, ինչպես ասել ենք այլուր, Մխիթարյանները այնտեղ բացել են գալոց, որի տնօրենը եղել է թատերագիր Պետրոս Մինասյանը» (Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության. հ. III, Երևան, 1975, էջ 182):

² Հայ հանրագիտակ, Պուքրեշ, 1938, էջ 708:

³ Նույն տեղում, էջ 707:

⁴ Ա. Չոպանյան. Հ. Ս. Երեմյան (մահախոսական). – «Անահիտ», 1939, №1-2, էջ 65:

⁵ Ռուբեն Բալասիի Գաբրիելյանը (1888–1968) հայ բնագիտության պատմության ճանաչված մասնագետ է: Եղբայրն է ՀՀ ԳԱ ակադեմիկոս Արտաշես Կարինյանի: Գրող

բին. «Թեև ես միաբանությունից հեռանալու պատճառներից մեկն էլ նրա հակումն էր դեպի ճշգրիտ գիտությունները, մասնավորապես բնագիտությունը»⁶: Ինչպիսի՞ թյուր կարծիք Մխիթարյան միաբանության գիտական գործունեության վերաբերյալ: Ռ. Գաբրիելյանի՝ վերը բերված առոգերը գրված են 1960-ականների սկզբներին, երբ Խորհրդային Հայաստանում շատերը դեռևս շշուկով էին խոսում Մխիթարյան միաբանների մասին, նրանց համարելով գիտության և առաջադիմության գաղափարների թշնամիներ: Առաջ անցնելով ասենք, որ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունները ոչ միայն թշնամի չեն բնական գիտություններին, այլև իրենց հիմնադրման առաջին իսկ օրվանից եղել և այսօր էլ մնում են մեծագույն ջատագովը բնական գիտությունների բոլոր բնագավառների:

Չավագանց բեղուն է Ս. Երեմյանի գրական հուշերը: Մեր մտավոր հաշվումներով նրա տպագիր գործերի ընդհանուր ծավալը տասը հազար էջերից ավելին է. բնագիտական դասագրքեր, հանրագիտարան, գեղարվեստական գործեր, գրականագիտական, գեղագիտական մեկնադրություններ, գրախոսություններ, կենսագրականներ: Նա հանդես է եկել նաև Ատրուշան գրական ծածկանվամբ⁷: Եթե Մխիթարյան միաբանության այս տաղանդաշատ վարդապետը գրեր միայն «Պատկերազարդ բառգիրք գործնական գիտությանը» (Վենետիկ, 1900, 835 էջ) իր տեսակի մեջ XIX դ. վերջին չգերազանցված հանրագիտարանը⁸, դարձյալ նրա անունը սիրով և անհուն երախտագիտությամբ պիտի գրոշմվեր հայ ժողովրդի մտավոր մշակույթի սլաամության էջերում:

Ս. Երեմյանի տպագիր առաջին գործերը զուտ բնագիտական են, որոնք շուրջ հինգ տարի հրատարակվել են Վենետիկի Սուրբ Ղազարի Մխիթարյանների տպարանում, ինչպես նաև «Բազմավեպ»-ի 1899-ի համարներում: Սակայն 1901-ից մինչև կյանքի վերջն այլևս չի անդրադարձել բնագիտական հարցերին՝ ամբողջովին նվիրվելով հայագիտական և գրական-գեղարվեստական գործերի լույս ընծայման ազգանպաստ գործունեությանը: Բազմաթիվ անգամներ շեշտվել է պատմական այն իրողությունը, որ Մխիթարյան շատ ու շատ շնորհաշատ վարդապետներ իրենց ուժերը նախ փորձել են բնագիտության բնագավառում¹⁰:

Վրթանես Փափագյանի քրոջ որդին է: Երկար տարիներ կենսաբանություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում և այլ բուհերում: Արժեքավորել է Մխիթարյան միաբանների բնագիտական աշխատությունները: Մի շարք մեկնադրությունների հեղինակ է, որոնցից առավել արժեքավոր է նրա լույս ընծայած գիրքը (Ռ. Գաբրիելյան. Ակնարկներ դարվիչների և բիոլոգիական մտքի պատմության հայ գրականության մեջ. Երևան, 1963):

⁶ Նույն տեղում, էջ 482:

⁷ Ա. Փ ա շ ա յ ա ն. XIX դարի քիմիան հայ բնագետների աշխատություններում. Երևան, 1992, էջ 150: Ն ու յ ն ի՝ Մխիթարյանների բնագիտական հրատարակությունները ԺԸ-ԺԹ դարերում. - «Բազմավեպ», 2001, №1-4, էջ 333-350, Ն ու յ ն ի՝ Մխիթարյանների բնագիտական թարգմանությունները ԺԸ-ԺԹ դարերում. - «Բազմավեպ», 2002, №1-4, էջ 408 - 440:

⁸ Գ. Լ. և Ն. յ ա ն. Երկեր. Երևան, 1963, էջ 449:

⁹ Ս. Երեմյանի հիշյալ հանրագիտարանի լույս տեսնելուց հետո (1900) ցույսոր որևէ մի հեղինակի կողմից հայատառ զուտ բնագիտական բնույթի նմանատիպ աշխատություն չի հրատարակվել:

¹⁰ Ահա այդ երախտավորների ոչ լրիվ ցանկը. Ղուկաս Օղուլլուխյան (1749-1830), Իգնատիոս Փափագյան (1764-1852), Մեսրոպ Աղազրազյանց (1769-1845), Մինաս Բժշկյան

Նախ ներկայացնենք բնագետ Երեմյանին: 1896-ին լույս է տեսել Ս. Երեմյանի բնագիտական ուսումնասիրությունների երախայրիքը՝ «Նոր կենդանաբանություն և մարդաբանություն՝ պատմական ու նկարագրական» 552 էջանոց շքեղ հրատարակված և շուրջ 600 նկար-պատկերներ պարունակող գիրքը: Այն ավարտվում է 30 էջանոց հայերեն-ֆրանսերեն բառարանով¹¹: Մինչև հիշյալ գրքի լույս տեսնելը կենդանաբանությունը նվիրված նմանատիպ գիրք աշխարհաբարով հայ իրականության մեջ չի հրատարակվել¹²:

Ս. Երեմյանի «Նոր կենդանաբանությունը» առաջին անդադարձողներույ մեկը ճանաչված դրող և Հայաստանի կենդանական աշխարհի պատմության քաջագիտակ մասնագետ Վախթանգ Անանյանն է: 1961 – 1969 թթ. Երևանում լույս տեսած «Հայաստանի կենդանական աշխարհը» հինգ հատորանոց կոլեկցիան աշխատություն էջերում նա բավմիցս անդադարձել է Ս. Երեմյանի վերը հիշատակված գրքին: Հարգարժան գրողը, սակայն, ոչ միշտ է իր մեկնաբանություններում անաչառ գիրքերից խոսել: Այսպես, բնութագրելով Մխիթարյան միաբանության անդամների կենդանաբանությունը նվիրված աշխատությունները, նա նշել է. «Անցյալներում Մխիթարյան միաբանությունը Վենետիկում և Վիեննայում հրատարակել է կենդանաբանական գրքեր: Դրանցից են օրինակ Հ. Ս. Երեմյանի «Նոր կենդանաբանություն և մարդակազմություն» աշխատությունը (Վենետիկ, 1896), Հ. Գ. Մենեվիչյանի «Կենդանաբանություն» (Վիեննա, 1897): Կան նյութեր նաև Հ. Ս. Էյրիկյանի «Բնաշխարհիկ բառարան»-ում, Հ. Ս. Երեմյանի «Բառգիրք գործնական պատմությանը» աշխատության մեջ և «Բազմավեպ»-ում: Սակայն այդ աշխատությունները տառապում են մի ընդհանուր սլակասություն: Կազմված են եվրոպական դասագրքերի և հանրագիտարանների հիման վրա, ուստի և հայերեն բնաշխարհի կենդանիները իրենց ուրույն «գեմքով» նրանց մեջ կամ տեղ չեն գտել, կամ ներկայացվել են հաճախ աղավաղված»¹³:

Ամենևին համամիտ չենք Վ. Անանյանի վերն արտահայտած տեսակետներին: Ճշմարիտ է, որ Մխիթարյանների լույս ընծայած բնագիտական, մասնավորապես կենսաբանական բնույթի դասագրքերում և ուսումնասիրություններում գրեթե բացակայում են Հայաստանի կենդանական և

(1777–1861), Մատթիա Գարագաշյան (1818–1903), Աբրահամ ճարյան (1819–1892), Հակոբոս Իսավերտեց (1835–1902), Գաբրիել Մենեվիչյան (1864–1936):

¹¹ Մխիթարյանների հրատարակած բնագիտական բոլոր ուսումնասիրություններն ավարտվում են երկու կամ եռլեզվյան (հիմնականում հայերեն-ֆրանսերեն, ֆրանսերեն-հայերեն, հայերեն-անգլերեն և հայերեն-ֆրանսերեն-թուրքերեն) բառարաններով: Առանց դրանց շատ հաճախ անհնար կլիներ օգտվել հատկապես «Բառագրքերից», որոնց բառահոգ-վածները ֆրանսերեն են:

¹² XVII դ. վերջին և XVIII դ. առաջին կեսին Կոստանդնուպոլսում պարել և ստեղծագործել է հայ առաջին կենդանաբան Աբրահամ Կոստանդնուպոլսեցին: Նրա ցարդ անտիպ «Պատմություն անասնոց և գազանաց, չորքոտանյաց, սողնոց և թյունավորաց, թռչնոց և մարդկանց, ծովային ձկանց» աշխատությունը գրված է իր ժամանակի եվրոպական գիտություն մակարդակով (տե՛ս Հ. Ա. Ն. ա. յ. ա. ն. Հայկական մատենագիտություն. Հ. Ա. Երևան, 1959, էջ 116): 1801-ին Վենետիկում լույս է տեսել Ղ. Ինճիճյանի «Պատմություն կենդանաց ի չորս կարգս բաժանեալ» գրաբար աշխատությունը: Հետագայում լույս են տեսել Հ. Ս. Երեմյանի «Տեսարան աշխարհի. Վենետիկ, 1810, 452 էջ (գրաբար): Ս. Ս. Երեմյանի «Բնական պատմություն: Կարգ թռչնոց. Վենետիկ, 1815, 45 էջ (աշխարհաբար): Բնական պատմություն. Վենետիկ, 1842, 590 էջ (գրաբար):

¹³ Վ. Ա. Ն. ա. յ. ա. ն. Հայաստանի կենդանական աշխարհը. Հ. 1. Երևան, 1961, էջ 4:

բուսական աշխարհի տեսակները: Բայց չէ՞ որ դասագրքերի վերնագրերը շատ րնդհանուր են. «Կենդանաբանություն», «Նոր կենդանաբանություն և մարդակազմություն»: Այսպիսի վերնագրերով դասագրքեր պրոդները, մեր կարծիքով, պարտավոր չէին բերել Հայաստանի կենդանական և բուսական աշխարհից օրինակներ: Այլ է խնդիրը Ղ. Ալիշանի «Հայբուսակ»-ի պարագայում, քանի որ արդեն վերնագիրն անմիջականորեն խոսում է քննարկվող նյութի մասին:

Մեկ նկատառում ես: Վ. Անանյանը հպարտանալու փոխարեն, որ Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու, Վենետիկի Սուրբ Ղազար կղզում, շուրջ երեք դար առաջ հաստատված, Փրանսերենին, իտալերենին, լատիներենին, արաբերենին և թուրքերենին քաջ տիրապետող մի խումբ քաջակորով վարդապետներ հայ ուսանողի և արհեստավորի համար ֆիզիկային, քիմիային, կենդանաբանությանը և բնագիտական այլ առարկաներին նվիրված շքեղ դասագրքեր և հանրագիտարաններ էին հրատարակում, հանդիմանում է նրանց, որ այդ հայատառ դասագրքերը «կազմված են եվրոպական դասագրքերի և հանրագիտարանների հիման վրա...»:

XVIII—XIX դդ. բնական գիտությունների բնօրրանը Եվրոպան էր: Վենետիկում և Վիեննայում հաստատված «եվրոպացի» Մխիթարյան միաբանները չէին կարող այլ, ոչ եվրոպական երկրներից գիտական լույս ստանալ: Վ. Անանյանին քաջ հայտնի էր, որ մինչև XIX դ. վերջերը, երբ լույս են տեսել Ս. Երեմյանի բնագիտական ուսումնասիրությունները, ոգջ Անդրկովկասում որևէ մի լուրջ հայտատառ բնագիտական դիրք չի հրատարակվել: Եղածները մանր-մուսր պարզունակ ոճով գրված աևարակներ են և կամ թարգմանություններ հիմնականում աուսերենից¹⁴:

Եվրոպայում Մխիթարյանների հաստատվելը և դրանից բխած միայն և միայն ազգօգուտ հետևանքները չափազանց դիպուկ է բնութագրել Լեոն. «Սուրբ Ղազարի վանքը դառնում է մի այնպիսի հաստատություն, որ պտնվելով եվրոպական հողի վրա, եվրոպական հանճարի նորանոր գյուտերը (ընդգծումը՝ Ա. Փ.) հաղորդում էր Հայ ժողովրդին: Հայտնի է, որ XVIII դ. վերջին քառորդում Մոնզոլֆիերի եղբայրները հնարեցին օդասարիկ զուևքը: Այդ պլուտից քիչ անցած՝ Հ. Եղիա էնտազյանը Սուրբ Ղազարի վանքում հրատարակում է (1785) մի փոքրիկ տետրակ՝ «Համառօտ պատմութիւն օդասարիկ պնտոյ», որի մեջ նկարագրում է աշխարհ գարմացրած այդ գյուտը»¹⁵:

Այժմ մեջ բերենք մեկ այլ մտավորականի՝ Հայ և Համաշխարհային մշակույթի խոշորագույն գիտակներից մեկի՝ գրող, քննադատ, բանասեր և Հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի կարծիքը. «Մխիթարի և իր Հաջորդներուն գործը կբաժանվի երկու հատվածներու, որոնց առաջինը

¹⁴1873-ին Վաղարշապատում Ղազարոս Աղայանի հայերեն թարգմանությամբ լույս է տեսել «Սկզբնական բացատրություն բնության երևույթներին» գիրքը, որը հիմնականում նվիրված է ֆիզիկային: Չորս տարի անց, այս անգամ արդեն Թիֆլիսում, դարձյալ Ղ. Աղայանի թարգմանությամբ հրատարակվել է «Ճիզիկա րսա Կրյուգերի» գասագիրքը, որն աննախողեայ երևույթ էր հիշյալ մամանակահատվածում Անդրկովկասում հայտատառ բնագիտական գրքերի հրատարակություններում: XIX դ. վերջում Թիֆլիսում Սմբատ Մուշեղյանի և Ա. Մխիթար-Ալապերդյանի թարգմանություններով լույս են տեսել բնագիտական այլ գրքեր (մանրամասն աե՛ս Ա. Փ ա շ ա ն Ն. XIX դարի քիմիան..., էջ 152–159):

¹⁵ Լ ե ո. Հայոց պատմություն. Հ. III, Երևան, 1946, էջ 1010.

կկայանա արդի հայուլթյանն իր անցյալին ոգումովը վերականգնելու, և երկրորդը՝ հայ միտքն արևմտյան քաղաքակրթության հետ անմիջականորեն ու մշտապես հաղորդակից ընելու մեջ: Գործունեության այդ երկու ճյուղի մեջ ալ Մխիթարի տունը կատարած է անգնահատելի դեր մը, բայց երկրորդին մեջ է մանավանդ, որ պետք է տեսնել Մխիթարյանց ճշմարիտ փառքի տիտղոսը: Մխիթար և իր հաջորդներն ամենեն մեծ սատարը եղած են արդի հայուլթյան «եվրոպացումին»¹⁶:

Այս տողերը գրողն իր ստեղծագործական ողջ կյանքն ասլբել է Եվրոպայի սրտում՝ Փարիզում: Ինքը ևս, Մխիթարյանների օրինակով, ոչ միայն եվրոպական մշակույթն է ներկայացրել հայերիս, այլև մերն է ներկայացրել աշխարհին՝ հայ մշակույթի յուրօրինակ դեսպանը լինելով Եվրոպայում: Միանգամայն համամիտ լինելով Լեոյի և Ա. Չոպանյանի վերը բերված դատողություններին, ավելացնենք նաև, որ Ս. Երեմյանը և նրան նախորդած գործընկերները Եվրոպայում հիշյալ ժամանակահատվածում եղած հատկապես բնագիտական դիտելիքները ոչ միայն ուղղեցին Հայաստան և հայ գաղթօջախներ, այլև մեծապես նպաստեցին բնագիտական հայ տերմինաբանության շատ ու շատ թերացումները շտկելու և կատարելագործելու վեհ ու ազգանվեր գործին:

Ռ. Գաբրիելյանը վերը նշված աշխատության էջերում անդրադարձել է «Նոր կենդանաբանությանը» տալով մասնագիտական արժեքավոր բնութագրումներ: Այնուհանդերձ, մեր կարծիքով, Ռ. Գաբրիելյանն իր որոշ եզրահանգումներում ավելին է պահանջել Ս. Երեմյանից, քան կարող էր իր գրքում տալ XIX դ. վերջին այդ լրջմիտ և 25-ը հազիվ բոլորած բնագետը. «Իերենք մի քանի օրինակ Երեմյանի դասագրքից («Նոր կենդանաբանություն և մարդակազմություն», 1896 թ.): Ահա թե ինչպես է նկարագրում խլուրդին. «Նլուրդի մարմինը գլանաձև է, մազերը կարճ են, փայլուն, թանձր և թխագույն, գլուխը երկայն քթով մը կվերջանա: Ականջը ծածկված են մորթին մեջ, աչքերն շատ փոքր են և հազիվ կտեսնվեն, անոր համար հին բնապատումք կկարծեին թե ամենևին աչք չունի: Ատամունք շատ սուր են, կբաղկանան 6.1.7/ 8.1.6: Ձեռունները լայն են, մատուրները կարճ, եղունգները զորավոր, ձեռուններով հողը ասդին անդին նետելով, կը բանա ստորերկրյա ճանապարհներ, կշինե բոլորաձև բնակարաններ, շատ լավ կլողա (էջ 55):

Սա գրված է 1896 թ., դարվինիզմի հաղթանակի օրից շատ և շատ տարիներ անցած, բայց և այնպես նկարագրերը տրված է այնպես, ինչպես Լիննեյի ժամանակաշրջանի գրքերում, որտեղ տրվում է բույսերի և կենդանիների զուտ արտաքին, մորֆոլոգիական նկարագրերը: Իսկ թե ի՞նչ նշանակություն ունեն «թանձր և թխագույն» մազերը, «երկայն քիթը», ականջի փոքր լինելը, շատ փոքր, հազիվ տեսանելի աչքերը, սուր ատամները՝ հայտնի չէ: Ոչ մի խոսք, իհարկե, մորթու հոմանավորող գունավորության մասին: Բոլորովին չի նշվում, որ նա ձեռքը չի քնում, հակառակ այլ միջատակերների, որոնք ձեռնային քուն են մտնում»¹⁷:

¹⁶ Ա. Չոպանյան. Երկեր. Երևան, 1988, էջ 371:

¹⁷ Ռ. Գաբրիելյան. նշվ. աշխ., էջ 122:

Ռ. Գարրիելյանի կարծիքով լանջախաչ կրող կաթոլիկ վարդապետ Ս. Երեմյանը իր «Նոր կենդանարանությունը» գրելիս առաջնորդվելու էր դարվինիզմի սկզբունքներով: Ավելացնենք, որ Խորհրդային Միությունում բոլոր կենսաբանները հիշյալ ժամանակահատվածում Չարլզ Դարվինի ուսմունքի երդվյալ ջատագովներն էին: Նշենք նաև, որ դարվինիզմը եղել և մնում է ամուր կանգնած դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերում, իսկ Ս. Երեմյանի համար դարվինիզմի ուսմունքը անընդունելի էր շատ պարզ պատճառով. Ս. Երեմյանը և բոլոր կղերականները իդեալիստներ են...

Ս. Երեմյանի «Նոր կենդանարանությունը» կարճ ժամանակ անց հաջորդել է մեկ այլ ուշագրավ աշխատություն¹⁸, որը հանքաբանությանն ամբողջովին նվիրված հայատառ երկրորդ աշխատությունն է¹⁹:

«Հանքաբանությունը» բաղկացած է 23 մասից. վերջում տրված է նյութերի անվանացանկը հայերեն, ապա՝ ֆրանսերեն, իտալերեն և որոշ դեպքերում նաև հունարեն: Գրքում կան տեղեկություններ աշխարհի տարրեր վայրերում եղած հանքերի քիմիական բաղադրության և քիմիական որոշ հատկությունների մասին: Սկզբից ևեթ ասենք, որ հեղինակը հանք ասելով նկատի է ունեցել ինչպես պարզ (ոսկի, երկաթ, պղինձ, ծծումբ և այլն), այնպես էլ բարդ (կերակրի աղ, արջասպ, պաղլեղ և այլն) նյութերը: Նկարագրված են նաև թանկարժեք մի շարք քարեր (տոպազ, զմրուխտ, ադամանդ և այլն): Առանձին գլուխներ են նվիրված հանքերի դասակարգմանը ըստ քիմիական բաղադրության, պարզ նյութերին, հանքերի ֆիզիկական և քիմիական հատկություններին: Առանձին աղյուսակով տրված են քիմիական 67 տարրերի նշանները, հայերեն և լատիններեն անվանումները:

Ս. Երեմյանի բնագիտական ժառանգության մեջ, մեր կարծիքով, առաջնությունը պետք է տանք նրա կոթողային աշխատությանը²⁰: 1253 նկարպատկեր-գծագրեր պարունակող աշխարհաբար արևմտահայերենով գրված այս գործն արժանի է առանձնահատուկ ուշադրության: Ի տարբերություն մինչ այդ հրատարակված Մխիթարյան միաբանության հանրագիտարանների²¹, այստեղ ընդգրկված են միմիայն բնագիտական բնագավառները. անասնապահություն, անդամազննություն, աստեղագրաշխություն, բժշկա-

¹⁸ Ս. Երեմյան. Նոր հանքաբանություն. Վենետիկ, 1898, էջ 175:

¹⁹ 1669 թ. Ամստերդամում լույս է տեսել Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց յարագրեալ վարդապետին Առաքելոյ Դաւրիժեցոյ» աշխատությունը, որի չորս էջերը (564–570) նվիրված են թանկարժեք քարերին գոհարներին: Բառարանագիր, պատմարան և թարգմանիչ Գեորգ Դպիր Պալատացին (Տեր-Հովհաննիսյան, 1737–1812) պարսկերենից հայերեն է թարգմանել «Գիրք մեծագին և պատվական ականց» (Կ. Պոլիս, 1807) աշխատությունը: 1897-ին Վիեննայում լույս է տեսել Վիեննայի Մխիթարյան միաբանության անգամ Դ. Մենեվիչյանի «Հանքաբանությունը» (տե՛ս Ա. Փ ա շ ա ն. Գարրիել Մենեվիչյանը՝ նաև բնագիտական աշխատությունների հեղինակ. – «Հանգես ամսօրյա», 2000, №1–12, էջ 337 – 346):

²⁰ Ս. Երեմյան. Պատկերազարդ բառգիրք գործնական գիտութեանց (այսուհետև՝ Բառգիրք). Վենետիկ, 1900, էջ 835: «Բառգրքի» հրատարակվելուն հաջորդած ամիսներին «Արևելքը», «Բանասերը», «Բյուրակներ», «Համայնարանը», «Մասիսը» և «Նոր-գարը» տպագրել են գրախոսություններ (տե՛ս Ա. Ղ ա զ ի կ յ ա ն. Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի. Վենետիկ, 1912):

²¹ Մ. Բ ժ շ կ յ ա ն. Ճեմարան գիտելեաց. Վենետիկ, 1815, 380 էջ (գրաբար), Մ Ք ա ջ ու լ ի. Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ գպրութեան. Հ. 1–3. Վենետիկ, 1891 – 1893, 2325 էջ (գրաբար):

կանություն, բնախոսություն, բնական պատմութիւն, բուսաբանութիւն, դեղավաճառութիւն, երկրագործութիւն, երկրաբանութիւն, կենդանաբանութիւն, հանքաբանութիւն, մեքենականութիւն, վիրաբուժութիւն, տնկաբանութիւն, քիմիա, ֆիզիկա:

«Բառգրքի» հակիրճ առաջարանում արված է գրքի լույս ընծայման գրդապատճառը. «Համեստ գրական լուծա մը կը ձգենք հայ գրականութիւն զանձանակին մեջ, և գործիս նպատակն է ազգային գասարաններն սկսյալ մինչև ժողովրդայն խավերուն մեջ տարածել, սիրելի և օգտակար ընել այն գիտութիւնը, որուն եվրոպան կը պարտի ներկա մտավոր և նյութական զարգացումը:

Հատորիկիս մեջ ընթերցողն ավելի գիտութեանց ուսումը՝ քան թե գիտական բառերու չոր հավաքածո պիտի գտնե: Բայց այսու չենք իմանար թե ներկա գործս գիտական բառագրքի մը ծառայութիւնն չի կատարեր: Ոչ սա ի բաց առեալ ուսումնական սնգործածելի բառերն՝ կը սլարունակե ընդհանուր գիտութիւնց գործնական բառերն՝ տալով անոնց հակիրճ, երկար և էջերով բացատրութիւն մը»:

Ս. Երեմյանի «Բառգիրքը» իր կառուցվածքով շատ նման է Մ. Քաջունու «Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց» աշխատութիւնը²²: Նախ տրվում է բառահոգվածի ֆրանսերենը և ապա հայերեն մեկնաբանութիւնը: Սա ինչ-որ տեղ դժվարացնում է գրքից օգտվելու հնարավորութիւնը: Հավանաբար, զգալով այդ, հեղինակը գրքի վերջում գրել է հայերեն-ֆրանսերեն (դադիերեն) 56 էջանոց բառացանկ: «Բառգրքում» բավականին շատ են թուրքերեն բառերը: Բոլորովին էլ պատահական չէ դա. գիրքը հասցեագրված է նաև հայ արհեստավորին, գյուղատնտեսին, դեղավաճառին, որոնց մեջ XIX դ. վերջերին կային նաև թրքախոսներ: Այդ նպատակով «Բառգրքի» վերջում տրված է նաև թուրքերեն-հայերեն-ֆրանսերեն բառացանկը:

«Բառգրքում» այս կամ այն բառահոգվածին հատկացված ծավալը տատանվում է կես էջից մինչև մի քանիսը: Առանձին դեպքերում, ինչպես օրինակ «Գինի, գինեգործութիւն» և «Էվոլյուցիա-բարեշրջում» բառահոգվածներում այն հասնում է մինչև 12–15 էջ: «Բառգիրքը» հանրագիտարան լինելուց բացի ինչ-որ տեղ նաև մատենագիտական տեղեկատու է: Այսպես, գրքի 167-րդ էջում Chimie – Քիմիա բառահոգվածի վերջում տրված են հայաստան քիմիական զբաղմունքի աղբյուրները: Այս իմաստով Ս. Երեմյանի հիշյալ հանրագիտարանն իր տեսակի մեջ եղակի է՝ մինչ այդ լույս տեսած հայաստան հանրագիտարանների համեմատ:

«Բառգրքի» դիտական մակարդակն ընկալելու համար ընթերցողի ուշադրութիւնն ենք ներկայացնում գրքից երկու հատված. «Զորավոր (այստեղ ուժեղ – Ա. Փ.) էլեկտրական հոսանք մը անցնելով նուրբ և կարճ մետաղե մը, զայն սաստիկ հրաշեկ կը տաքցրնե և նաև կը հալեցրնե: Լուսնոսկի է (պլատին – Ա. Փ.) թելին էլեկտրականութիւն հաղորդելով,

²² 1891, 1892 և 1893 թթ. վենետիկում գրաբար լույս է տեսել վենետիկի Միսիթարյան միաբանութիւնի ակադեմիայի ղեկավար Երեմյանի «Բառգիրքը»: 1078 նկար-պատկերներով 2325 էջանոց կոթողային այս աշխատութիւնը էջերում քննված են բնական, ճշգրիտ գիտութիւնների, ինչպես նաև երկրագործութիւն, բժշկութիւն, մի շարք արհեստների և արվեստների խնդիրները:

Մեր ուսումնասիրություններից մեկում²⁶, առաջին անգամ Հայաստանում, հպանցիկ անգրագարձել ենք Ս. Երեմյանի «Բառգրքին», շեշտը դնելով գրանում եղած քիմիական գիտելիքներին: Հետագայում անդրադառնալով XIX դ. Մխիթարյանների լույս ընծայած Հանրագիտարաններին, դարձյալ անդրադարձել ենք «Բառգրքին»²⁷:

1899–1905 թթ. Ս. Երեմյանը «Բազմավեպի», իսկ 1901-ին «Գեղունի» Հանդեսների խմբագիրն էր²⁸: Մինչև 1899 թ. «Բազմավեպի» խմբագիրներից ոչ մեկն այդքան երկար (վեց տարի) չի խմբագրել ամսագիրը²⁹:

1899-ից մինչև կյանքի վերջը Ս. Երեմյանը «Բազմավեպ», «Գեղունի», «Շիրակ»³⁰, «Շանթ»³¹ ամսագրերում տպագրել է Հայագիտության տարբեր բնագավառներին, համաշխարհային արվեստին, հայ և օտարազգի մշակութային գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնելուն և արժեքավորելուն նվիրված մեծ թվով ուսումնասիրություններ:

Ս. Երեմյանը Մխիթարյան միաբանության այն երևելիներից է, ովքեր բարձր են գնահատել արևելահայ գրողներ Խ. Աբովյանին, Բաֆֆուն, Ղ. Աղայանին, Մ. Նալբանդյանին, Հ. Թումանյանին, Գ. Սունդուկյանին, Ա. Իսահակյանին, Շիրվանզադեին և շատ ու շատ ուրիշների:

Այդքանից հետո «Գեղունի»-ի հիմնադիր այդ ներհուն մտավորականն ու գիտնականը դարձյալ «հարվածի» տակ է: Այս անգամ արդեն «կղերապահպանողական» հայացքների համար. «1901-ին Վենետիկում սկսեց հրատարակել «Գեղունի» Հանդեսը, որը մի քանի տարվա ընթացքում (մինչև 1910) տեղ տվեց արևմտահայ և արևելահայ շատ գրողների երկերի թարգմանությունների, պատմաբանասիրական և քննադատական նյութերի (այդ թվում նաև Լեոյի «Ռուսահայոց դրականությունը» աշխատությունը), բարձր որակով տպագրված գունավոր նկարների: Սակայն Հանդեսի խմբագիրների (Ս. Երեմյան, Մ. Պոստոլյան) կլերսապահպանողական հայացքներն իրենց կնիքն էին դնում նյութերի ընտրության և մեկնաբանության վրա»³²: Եթե մինչև 1960-ականների սկիզբը «կղերապահպանողական հայացքներ» արտահայտությունը ինչ-որ տեղ ընկալվում էր, ապա 1970-ականների վերջերին, քիչ է ասել, ծիծաղելի էր հնչում: Ս. Երեմյանն իրոք որ կղերական էր, այսինքն՝ հոգևոր գործիչ: Բնական է նաև, որ կղե-

²⁶ Ա. Փ ա շ ա յ ա ն. XIX դարի քիմիան..., էջ 147-148:

²⁷ Ա. Փ ա շ ա յ ա ն. 19-րդ դարում Մխիթարյանների հրատարակած Հանրագիտարանները. - «Պայքար», 1998, №1, էջ 31-33:

²⁸ Վենետիկի Մխիթարյան միաբանության «Գեղունի» երկամյա պատմաբանասիրական և գրական-գեղարվեստական պատկերազարդ Հանդեսը լույս է տեսել 1901-1906, 1909, 1927, 1947 և 1949 թթ.: Հիմնադիր խմբագիրն էր Ս. Երեմյանը:

²⁹ «Բազմավեպ»-ը հիմնադրել և խմբագրել է 1843-1848-ին Գ. Այվազովսկին: Նրան հաջորդել են Ղ. Այիշանը (1848-1851), Օ. Գուրգենյանը (1852-1853), Գ. Ճելալյանը (1854-1856, 1858-1861, 1863-1866), Պ. Պապիկյանը (1856-1857, 1876-1878), Ա. Սիոնիկը (1861-1863), Ա. Ղափլանյանը (1867-1870), Հ. Իսավերտենցը (1871-1872), Կ. Իսկենտերյանը (1873-1875), Ա. Սուքրյանը (1875-1876), Ա. Բասթանտիլյանը (1879-1882), Ա. Կիրոյանը (1883-1888), Հ. Թորոսյանը (1889), Թ. Էֆտյանը (1890-1892), Ե. Տալեցին (1893-1896), Հ. Թորոսյանը (1896-1899), Ս. Սարյանը (1898-1899): Տե՛ս Ս. Շ տ ի կ յ ա ն. Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801-1850). Երևան, 1973, էջ 259-260):

³⁰ «Շիրակ» գրական, քաղաքական և Հասարակական Հանդեսը լույս է տեսել Ալեքսանդրիայում (1905-1907), Կահիրեում (1906-1907) և Կ. Պոլսում (1909): Խմբագիր-տնօրեններն են եղել Վ. Թեքեյանը, Մ. Կյուրեյանը, խմբագիրը՝ Ա. Արփիարյանը:

³¹ «Շանթ» գրական-գեղարվեստական Հանդեսը լույս է տեսել 1911-1915 և 1918-1919-ին Կ. Պոլսում:

³² Հայ նոր գրականության պատմություն. Հ. 5, Երևան, 1979, էջ 29:

րականը պետք է լինի կղերապաշտական գաղափարախոսությունը հետևող. հարող անձնավորություն: Ի՞նչ այսպանելի բան կա այստեղ: Բուլորովին այլ է վերը քննարկված հարցի առթիվ Ա. Չոպանյանի կարծիքը. «Ազգասեր և աղնիվ հայ մրն էր, ուներ բուռն սեր հայ գրականության և արվեստի հանդեպ, գնահատելի ծառայություններ մատուցց Ս. Ղազարու հրատարակչական գործին՝ իբր Բալմալեպի խմբագիր իր քանի մը տարի ստանձնած աշխատանքով»³³:

Եթե Ս. Երեմյանի բնագիտական ժառանգության բարձրակետը «Բազիրքն» էր, ապա հայագիտությանը մատուցած նրա ամենամեծ ծառայությունը 1913–1934-ին Վենետիկում լույս ընծայած «Ազգային դեմքեր. գրագետ հայեր» տաս հատորանոց աշխատությունն է: Շուրջ 5000 էջ ընդհանուր ծավալով գրականագիտական ուշագրավ այս բաղմահատորյակի³⁴ առաջարանում ահա թե ինչ է գրել հեղինակը. «Հրապարակ կելլե Գրագետ հայեր գրքիս այն հատորն, որ առաջին շարքը կը կազմե իմ ուսումնասիրութեանս, ուր առաջնության կամ պատմական հատուկ դասավորություն մը չեմ դնել: Այսպես ըրած է Ժյուլ Լըմեդը, որուն ոճով կամփոփեմ տեսություններս յուրաքանչյուր տաղանդավոր ֆրանսիացի մեծ գրագետին հետ: Եվ գրչի տեր բազմաթիվ բարեկամներու խնդրանքին վրա՝ մամուլի կհանձնեմ այս աշխատությունս: Հաջորդաբար հրատարակելով մյուս շարքերը, կամրողանան «Ազգային դեմքեր» ու ընդհանուր պատմական ուսումնասիրությունս, և այժմեան կարող եմ ըսել, որ այդ աշխատությունս արգեն իսկ գրված ու պատրաստ է: Ընդհանրապես սահմանափակված եմ այն գրագետ գեմքերուն մեջ, որոնք մտքի և գրականության որոշ գործունեությունն մը ունեցեր են՝ անցյալ հիսնական թվականեն մինչև մեր ասլրած օրերը»:

Կարծում ենք, սուված է ամեն ինչ և նոր խոսք սուկու. կարիքը չկա: Այնուհանդերձ արձանագրենք, որ հեղինակն անդրադարձել է V դ. մինչև XX դ. սկիզբը ստեղծագործած շուրջ 100 գրողների, մշակութային գործիչների կյանքին և գրական գործունեությանը³⁵: Ս. Երեմյանը հիշյալ բաղմահատորյակում, բացի անհատների կենսագրություններից, անդրադարձել է նաև վերլուծական, ընդհանրացնող ուսումնասիրությունների (հայ աշուղներ, միջնագարյան հայ գրականություն, Բ շարք):

«Գրագետ հայեր»-ի Ա շարքի տպագրման հաջորդ տարում «Մշակը», դրվատելով հիշյալ գործի լույս աշխարհ գալու իրողությունը, մասնավորապես նշել է. «Հ. Երեմյանի «Գրագետ հայերը» առաջին հատորը կարդայվում է հաճությամբ: Դա սկիզբն է մի շահեկան աշխատության, որին ձևոնարկել է հեղինակը: Ամբողջ գործը կլինի ընթերցանության համար

³³ «Անահիտ», 1939, №1–2, էջ 65–66:

³⁴ Մինչ այդ, այգպիսի ծավալով գրականագիտական ուսումնասիրություն հայ իրականության մեջ չի հրատարակվել: 1921-ին Կ. Գոյսում հրատարակվել են Հրանտ Ասատուրի «Դիմաստվերները», 1921–1929-ին Փարիզում լույս է տեսել Արշակ Չոպանյանի հայ մշակութի նշանավոր գործիչներից շուրջ երկու տասնյակին նվիրված «Դեմքեր» երկհատորյակը: Երուսաղեմում, Անթիլիասում և Բեյրութում 1945–1982 թթ. լույս են տեսել Հակոբ Օշականի «Համապատկեր արեմտահայ գրականության» տասհատորյակը:

³⁵ Ուշագրավ է «Գրագետ հայերի» Բ շարքը, որն առանձնանում է մյուսներից: Դրանում ընդգրկված են նաև ակնարկային հոդվածներ:

մշտաշահ փոքրիկ գրադարան, որտեղ ամփոփված կլինի մտքի և գրականության մեջ գործող դեմքերը (ընդգծումը՝ Ա. Փ.)»³⁶:

«Գրագետ հայեր»-ին խորհրդային Հայաստանում առաջին անգրադարձներից մեկը եղել է 1960-ին. «Հ. Երեմյանի մեծարժեք գործն է (ընդգծումը՝ Ա. Փ.) «Գրագետ հայեր» 10 հատորանոց աշխատությունը»³⁷:

Այդ «մեծարժեք գործ»-ին ահա թե ինչպիսի վերաբերմունքի է արժանացրել անցյալ դարի 70-ականների Հայաստանի դրականագիտական միտքը. «Ինչպես արևմտահայ, այնպես էլ մասամբ արևելահայ հեղինակների մի քանի տասնյակի հասնող դրական դիմանկարների շարք ստեղծեց Մխիթարյան միաբանության հայտնի գործիչ Սիմոն Երեմյանը: Նրա «Գրագետ հայեր» տաս ստվար հատորներից կազմված շարքը լույս տեսավ հիմնականում 1913–1914 թթ. (հատորներից մի քանիսը սուղազրվել են ավելի ուշ): Ոչ դիմանկարների դասավորությունը, ոչ էլ մտածողությամբ Երեմյանի գրքերը սլատմություն չեն կազմում: Բայց նրանց մեջ հավաքված բանասիրական վիթխարի նյութը չի կարող չընդհանրվել հայ գրականության (մանավանդ XIX դ. առաջին կեսի) սլատմությունը հետազոտելիս»³⁸: Նախ շնորհակալություն հայտնենք մեծարգո գրականագետներին, որ գոնե մեկ-երկու գովեստի խոսքեր ուղղել են Ս. Երեմյանի հիշյալ աշխատությունը: Անհասկանալի և մշուշոտ է «բացարձակապես խառը և պատահական» արտահայտությունը: Հավանաբար, նկատի է առնված տարբեր ժամանակահատվածների և ժանրերի գրողների կենսագրությունների հայտնվելը մեկ շարքում: Ի՞նչ զարմանալու բան կա այստեղ: Նախ հեղինակը Ա շարքի առաջաբանում գրել է. «... ուր առաջնություն կամ պատմական հատուկ դասավորություն մը չեմ դրեր»: Ցանկացած հանրագիտարանի մեկ էջի վրա կարող է լինել նշանավոր որևէ գործչի կյանքը, բույսի կամ կենդանու սլատկեր... Ի՞նչ կա այստեղ այսպանելի: Ս. Երեմյանը հիշյալ գրքի Ա շարքում Ղ. Աղայանի կենսագրությունը և գրական գործունեությունը քննարկվել է Մխիթարյան միաբանության անդամներ Արսեն Բագրատունու և Էգուարդ Հյուբերյանի կենսագրությունների կողքին: Որևէ արտառոց երևույթ, մեր կարծիքով, չկա այստեղ: 1944 թ. Երևանում լույս տեսած Արսեն Տերտերյանի «Հայ կլասիկներ»-ում էլ նույն Ղ. Աղայանի գրական գործունեությունը քննարկված է Ղ. Ալիշանի, Ե. Օտյանի, Հ. Պարոնյանի և մեր ուրիշ դասականների անունների կողքին: Ավելին, «Հայ կլասիկները» եզրափակում է «Հակոբ Հակոբյանը և մեր օրերը» հոդվածը: Այդ ո՞ր իրավունքով է հայ պրոլետարական դրականության հիմնադրի անունը դրվել Ղ. Ալիշանի և Ե. Օտյանի անունների կողքին: Այն սլարգ տրամաբանությամբ, որ երեքն էլ գրչի մարդիկ են...

Այլ է արևմտահայ դրականագետ Հ. Գաղանճյանի (1870–1915) կարծիքը «Գրագետ հայերի» վերաբերյալ: Նա ևս, նշելով հանդերձ տասհատորյակում տեղ գտած թերությունները, մեծապես արժեքավորել է հիշյալ գործը. «Հ. Երեմյանի գրական արժեք ունեցող գործը (ընդգծումը՝ Ա. Փ.) պետք է համարվի «Գրական դեմքերը» շարքը, որոնց մեջ ընդարձակորեն

³⁶ «Մշակ», 1914, փետրվար, էջ 2:

³⁷ Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ. Երևան, 1960, էջ 82:

³⁸ Հայ նոր գրականության պատմություն. հ. 5, էջ 45:

կուսուժնասիրն ժամանակակից Հայ գրողները: Բայց ասոնք ալ սովորարար ճապող (այստեղ՝ ձգձգված, ծավալված, երկարաբան — Ա. Փ.) գրվածքներ են, դուրկ դասավորութենն և քննադատական սլաշառ Հայդքներն»⁴⁰:

«Քրաղետ Հայեր»-ի 2-րդ շարքի 37–84 էջերը, շուրջ 30 էջ նվիրված է Սայաթ-Նովայի կյանքին և գործունեությանը: Մինչ այդ նման ծավալով անդրադարձ Սայաթ-Նովային չի Հրապարակվել Հայ իրականության մեջ: Այն նախապես Հրատարակվել է 1912 թ. «Բազմավեպ»-ի Համարներից մեկում: Այս առումով Ս. Երեմյանի անունը ևս պետք է դրվի սայաթնովագետների անունների կողքին՝ պատմական մի իրողություն, որն ինչ-ինչ պատճառներով դուրս է մնացել Սայաթ-Նովայի կյանքով և գործունեությամբ զբաղվողների ուշադրությունից⁴¹:

Ուզեցրական գործի արժեք ունի Ս. Երեմյանի պատկերադարը, 210 մեծադիր էջեր պարունակող ուշագրավ «Կ. Պոլիս, սպավորություններ» աշխատությունը⁴²: Սեղմ առաջաբանում Սխիթարյան վարդապետը մարգարեարար գուշակել է այն մեծ աղետը, որը պայթեց արևմտահայերի գլխին գրքի Հրատարակումից ընդամենը երկու տարի անց. «Կ. Պոլիս այցելած տեղերուս տպավորությունները Հոս կխտացնեմ Հակիրճ տողերով: Սահմանագրությունն անմիջապես վերջը կը Հասնեի Օսմանցիներուն մայրաքաղաքը, ուր անըջանքներու և քաղցր զգացումներու կյանք մը սկսված էր: Մեր աղգը կերազեք Սահմանագրության խոստացած Ազատությունը: Իմ այս Հատորիս մեջ ակնարկ մը նետած եմ անըջանքներու տխուր անիրականությունից վրա...»:

Հիշյալ գրքում գետնիված են Կ. Պոլսում ստեղծագործած Հայ մշակույթի շուրջ երկու տասնյակ երևելի գործիչների Համառոտ կենսագրականները և լուսանկարները⁴³: Գրքում Հնարավորինս քննարկված են Հայազգի գործիչների մատուցած անուրանալի ծառայությունները Օսմանյան կայսրությանը մշակութային, դիվանագիտական, ֆինանսական և կառավարման տարարներով ասպարեզներում: Հատկապես արժեքավորված են XVIII–XIX դդ. Կ. Պոլսում ստեղծագործած Պալյան գերդաստանի ճարտարապետական Հոյաչեն կառույցների անկրկնելի Հմայքն ու ճանաչողական արժեքը:

Ս. Երեմյանը Ղևոնգ Ալիշանի (1820–1901) առաջին կենսագիրներից է⁴⁴: 1902-ին, Ալիշանի մահվանից մեկ տարի անց՝ Վենետիկում լույս է տեսել Երեմյանի «Կենսագրություն Չ. Ալիշանի» 208 էջանոց մենագրությունը:

⁴⁰ Չ. Գ ա գ ա ն ճ յ ա ն. Պատմություն Հայ գրականության. Անթիլիաս, 1970, էջ 204–205:

⁴¹ Արժանին պետք է մատուցել Պարույր Սեակին, որն իր «Սայաթ-Նովա» մենագրության (Երևան, 1967) վերջում գետնիված գրականության ցանկում դրել է Ս. Երեմյանի նշված աշխատությունը:

⁴² Ս. Երեմյան. Կ. Պոլիս. տպավորություններ. Վենետիկ, 1913:

⁴³ Ահա այդ գործիչները՝ Արրահամ Ճարյան, Մկրտիչ Աճեմյան, Եղիշ Սրբազան Դուրյան, Հովհաննես Արելյան, Մինաս Ջերազ, Նիկողոս Պալյան, Սարգիս Պալյան, Լևոն Պալյան, Թովմաս Թերզյան, Գարրիել Նորատունկյան, Բյուզանդ Քեչյան, Ստեփան Կուրտիկյան, Վահրամ Թորգոմյան, Գրիգոր Ջոհրայ, Վարդգես Պապիկյան, Դավիթ Դավթյան, Միրայել Փորթուգալյան, Մալաթիա Սրբազան Օրմանյան, Սրասիոն Հեքիմյան, Թեթեոս Պերպերյան:

⁴⁴ Նկատի ունենք առանձին մենագրության տեսքով:

յունը: Այն բացվում է Ղ. Ալիշանի՝ Իգնատիոս Կյուրեղյանին⁴⁴ նվիրված «Նուազ» բանաստեղծութամբ, որը Ս. Երեմյանը հայտնաբերել է Ղ. Ալիշանի 1902-ին դեռ անտիպ բանաստեղծությունների մեջ: «Կենսագրություն Ղ. Ալիշանի» գրքում տրված է Ղ. Ալիշանի կյանքի և գիտամանկավարժական ողջ գործունեությունը՝ աշակերտական տարիներ, քահանայություն, ուսուցիչ և դաստիարակ, տեսուչ Ռաֆայելյան վարժարանում, գիտական բուռն գործունեություն Սուրբ Ղազարի վանքում, հրատարակած և անտիպ գործեր: Մեզ առավել հետաքրքրեց գրքի վերջում բերված անչափ կարևոր մի տեղեկատվություն. երեք-չորս էջերում բերված են Ղ. Ալիշանի մահվան առիթով ստացված ցավակցությունների հրապարակումները⁴⁵:

1915-ին Վենետիկում լույս տեսած Ս. Երեմյանի «Գրական սլատմություն և Գեղեցիկը» (304 էջ) ուսումնասիրությունը, ինչպես վկայում է հեղինակը գրքի առաջաբանում, գեղագիտությունը նվիրված առաջին գործն է հայ իրականության մեջ. «Բազմավեպի մեջ երկու տարի շարունակաբար հրատարակած գեղարվեստի վրա պատմական և գրական ուսումնասիրությունաց շարքը՝ այժմ առանձին այս հատորիս մեջ ամփոփված է. բազմաթիվ պատկերները ընթերցողին պիտի պարզեն մեր արվեստագիտական դիտողություններուն նպատակը:

Աշխատությանս ամենեն ավելի աղբյուր եղան թենի, Կյուրեղյի և Օսկար Ուայլդի գեղարվեստական հաստորներն:

Իմ այս արվեստի գրականությունեն դուրս կմնան ամեն այն մասանագի դեմքերն, որ արվեստի գործին նպաստած չեն, անոնք մաս կկազմեն բանասիրական սլատմության:

Իմ ներկա գործս արվեստագեղագրական պատմության թերաստվեր մըն է, և առաջին փորձ մեր գրականության մեջ: Ասոր ընդարձակ առայժմ անտիպ կմնա գրատանս մեջ, վաղուց պատրաստ արդեն:

Արվեստասեր գրագետ բարեկամներու թախանձագին վրա ահավասիկ լույս կտեսնի այս իմ փոքրիկ աշխատությունս»:

Ս. Երեմյանի հիշյալ գործի արժեքը լավագույնս բնութագրում են գրքի համապատասխան գլուխները. «Մեր գրականության ծագումը», «Մեր գրականության ձգտումը», «Գեղեցիկին արժեքը մեր մեջ», «Հին ճարտարագետությունը մեր մեջ», «Հայ գեղարվեստի բեկորներ», «Գեղարվեստական փոխանցումներ», «Ճաղանդավոր գեղեցիկը», «Գեղեցիկը հատկութ-

⁴⁴ Ս. Երեմյանը իր շատ ու շատ ուսումնասիրություններում առանձին համակրանքով և խորին երախտագիտությամբ է խոսել իր հայրենակցի՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության երեքի գործիչներից մեկի՝ Իգնատիոս Կյուրեղյանի մասին: Իգնատիոս Կյուրեղյանը ծնվել է 1833-ին Տրապիզոնում: 1855-ից՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: 1866-1872-ին գիտակրթական գործունեություն է ծավալել Վենետիկի Մուրագ-Ռաֆայելյան վարժարանում: 1876-ին ընտրվել է Վենետիկի Մխիթարյան միաբանության արքահայր: 1877-ից՝ արքեպիսկոպոս: Բ. Կյուրեղյանը մեծ շարականագետ էր՝ օժտված գեղեցիկ և տպավորիչ ձայնով: Հրատարակել է «Կարգավորություն հասարակաց աղոթից Հայաստանյայց Եկեղեցիք» (1898, Վենետիկ), «Ժամագիրք արենի» (Վենետիկ, 1903), «Ձայնքայլ շարականք» (Վենետիկ, 1907): Ջրաղվել է նաև թարգմանական գործունեությամբ: Վախճանվել է 1921 թ. դեկտեմբերի 1-ին Վենետիկում (տե՛ս Սուրբ Ղազար, Մայրավանք Մխիթարյան միաբանության Վենետիկ, 1966, էջ 20: Գ. Ս տ Ե փ ա ն յ ա ն. Կենսագրական բառարան. Հ. Բ, Երևան, 1981, էջ 115):

⁴⁵ Ղ. Ալիշանի մահվան առիթով Վենետիկի Մխիթարյանները ստացել են 76 հեռագրեր, 100-ից ավել նամակներ, 70 քարտեր:

յուն է», «Գեղեցիկի քննադատությունը», «Գեղեցիկին արժեքը մեր մեջ», «Գեղեցիկ տպավորություն», «Իրապաշտ գեղեցիկը»: Սրան պետք է ավելացնել երեք տասնյակի հասնող բարձրաճաշակ շքեղ լուսանկարների առկայությունը, որոնք գեղագիտական հզոր լիցքեր են հաղորդում գրքին:

Գեղագետ Ս. Երեմյանը, մեր խորին համոզմամբ, ըստ արժանվույն գնահատված չէ: Ռեթեոս Պերպերյանի որդին՝ Շահան Պերպերյանը (1891–1956), որն առավել հայտնի է արվեստագիտությանը նվիրված աշխատություններով, իր ուսումնասիրություններից մեկում⁴⁶ ինչ-ինչ պատճառներով զլացել է դոնե մեկ-երկու տող նվիրել Ս. Երեմյանի հիշյալ աշխատությանը:

Ս. Երեմյանի աշխատությունը շատ սեղմ, սակայն մասնագիտական բարեխիղճ քննարկման է ենթարկվել 1976-ին Մոսկվայում հայ հեղինակների աշխատասիրություններ լույս տեսած հայ գեղագիտությանը նվիրված աշխատության էջերում. «Մինչհեղափոխական շրջանի մյուս աշխատությունը, որն անհրաժեշտ է հիշատակել, Մխիթարյան միաբանության անգամ Ս. Երեմյանի «Գրական պատմություն և գեղեցիկը» գործն է, որտեղ հեղինակը լուսաբանել է XIX դարի հայ մշակույթի մի շարք գործիչների գեղագիտական տեսակետները: Գրքի շարադրանքը գուցակցվում է համաշխարհային արվեստի, գրականության և գեղագիտության լայն տեսադաշտի վրա: Թեև գիրքն աչքի չի ընկնում տեսական հատուկ խորությամբ, իսկ գեղագիտական նյութը դրանում տրված է հիմնականում գրականության պատմության հետ գուցակցված, այնուհանդերձ այն հետաքրքիր է որպես պատմական իրադարձություններով հագեցած հիշյալ ժամանակահատվածի համար Հայաստանի գեղագիտական միտքը ներկայացնելու առաջին փորձ»⁴⁷:

Ա. Չոպանյանը շատ հպանցիկ արժեքավորել է Ս. Երեմյանի՝ գեղագիտությանը նվիրված ուսումնասիրությունները. «Գրական ու գեղարվեստական պատկերազարդ շքեղ հրատարակված նկարներուն և գրվածքներուն ընտրությունն ալ միշտ անստգյուտ չէր, բայց որոնք հայկական տպագրության պատիվ բերող ձեռնարկներ էին: Ատոնց համար ան արժանի էր որ իր մահվան առթիվ ողջունենք գրականության ու արվեստի այդ խանգավառ սիրողը, որ կանհայտանա»⁴⁸:

Է. Զրբաշյանի աշխատություններից մեկում⁴⁹ մեզ սպասում էր խոր հիասթափություն: Գրքի 104 էջանոց «20-րդ դարի հայ քննադատները» գլխում ներկայացված են Լեոյի, Կարապետ Կուսիկյանի, Մինաս Բերբերյանի, Արշակ Չոպանյանի, Արսեն Տերտերյանի և այլոց գեղարվեստական և գեղագիտական հայացքները և ոչ մեկ տող Ա. Երեմյանի մասին...

Բնույթով խիստ ինքնատիպ է 1906-ին Վենետիկում լույս տեսած Ս. Երեմյանի «Հայ միտքը» 470 էջանոց գիրք-քրեստոմատիան, որի էջերում գետեղված են V–XIX դդ. վերջը ստեղծագործած հայ պատմիչների, գրողների, փիլիսոփաների, աշուղների ստեղծագործություններից հատվածներ:

⁴⁶ Շ. Պ ե ր պ ե ր յ ա ն. Գեղագիտություն և գեղարվեստ. Բնյուրթ, 1975. 414 էջ.

⁴⁷ Очерк развития эстетической мысли в Армении. Под общей редакцией Я. Хачикяна, М., 1976, с. 5-6.

⁴⁸ Ա. Չ ո պ ա ն յ ա ն. Հ. Ս. Երեմյան (մահախոսական):

⁴⁹ Է. Զ ր բ ա շ յ ա ն. Գեղագիտություն և գրականություն. Երևան, 1983:

Ահա և գրքն առաջաբանից մի հատված, որը լիովին բացահայտում է թե հիշյալ գիրքն ինչ դրդապատճառներով է գրված և ում է հասցեագրված. «Թափառելով գրականության բուրաստանները, փնջեցի մտքի ծաղիկներ: Վարպետ ու ճարտար փնջող մը համարելու հավակնոտությունը չունիմ ճաշակիւ թելադրության համեմատ: Քաղեցի մեր մտքերուն գեղեցիկը. բայց ավելի կենսականը: Նւրառաւ գեղեցկագիտության էջեր ու սլափառիկներ հավաքել չէր, այլ ամենուն ճաշակին և ճարտասանության օգտակար փաստեր գտնել այն մտքերէն, որոնք գրքերու երեսներուն մեջ կշռուէին: Բնական է, որ անոնք իրենց ցոլքերով ինձի պէս շատերը հրապուրած են, բայց առաջին անգամ կփափաքիմ ես ըլլալ խտացուցիչը այդ հոգեկան գույներուն, չի խնայելով ջանքը, ինչ որ կը թափե Վենետիկցին իր մուղայիքն պատկերները հորինելուն: Աշխատանքիս մեկ մասը՝ հայկական բաժինը միայն կհրատարակեմ: Միջազգայինը առայժմ կթողում մեռած»:

«Հայ միտքը» յուրօրինակ այգ քրեստոմատիայում Ս. Երեմյանը մեկերկու նախադասութեամբ տվել է այս կամ այն գործչի արտահայտած թեւաւոր խոսքը՝ համապատասխան հղումով: Այսպես, գրքի 398-րդ էջում բերված է Խ. Աբովյանի ասույթներից մեկը. «Բազմի մասին Աբովյան գրած է. Սեր աստղը մեկ անգամ թեքվել ա, էսպէս եկել ենք. էսպէս էլ կերթանք: Վերք Հայաստանի, էջ 35»: «Հայ միտքը» ավարտվում է չորսհինգ էջերում ամփոփված շուրջ հարյուր առածներով:

Ս. Երեմյանը գրել է վիպակներ, վեպեր, արձակ բանաստեղծություններ, ողբերգություններ, որոնց մի մասը հրատարակվել է ամսագրերում, իսկ մեծ մասը առաձին գրքերով՝ Վենետիկում⁵⁰: Առանձին գրքերով անդրադարձել է Պետրոս Դուրյանի, Հրանտ Նազարյանի, Իգնատիոս Կյուրեղյանի կենսագրություններին: Հ. Գաղանճյանի վկայությամբ. «Երեմյանի լավագույն գրվածքները կմնան իր արձակ բանաստեղծությունները՝ ցրված թերթերու մեջ»⁵¹:

Խիստ ինքնատիպ է Ս. Երեմյանի կենսագրական մեկ այլ աշխատությունը՝ նվիրված Ի. Կյուրեղյանին⁵²: Ինքնատիպ է մի քանի իմաստով: Նախ, որ առաջին փորձն է Վենետիկի Մխիթարյան միաբանության վեցերորդ արքայի Իգնատիոս Կյուրեղյանի կյանքի և գիտամանկավարժական գործունեության անաչառ գնահատման: Մյուսը սույն աշխատությունում պատմական մի կարևոր իրողության առկայությունն է: Այն առնչվում է Գրիգոր Արծրունու՝ Վենետիկի Մխիթարյան միաբանությունում հայերենի մեջ խորամուխ լինելու խնդրին. «1870-ին «Մշակ»-ի խմբագրապետ Գրիգոր Արծրունին կու գա Հ. Ալիշանեն հայերեն սորվելու: Հ. Ալիշան ցույց կու տա իր օգնականը՝ Հ. Իգնատիոս Կյուրեղյանը: Գրիգոր Արծրունին աղնվական վարժապետի մը կհամոզիայի: Շատ ակործով աշակերտ կրլա իր երիտասարդ վարժապետին: Սա ընտանություն մը ու սիրով կսկսի դա-

⁵⁰ Անեծք (ազգային ողբերգություն), 1903, 45 էջ: Դարձը (պատմական ողբերգություն), 1917, 117 էջ: Կայակներ (պատմվածքներ), 1913, 210 էջ: Մեռելներու կարավանը (բանաստեղծություններ), 1921, 67 էջ: Մաթենիկ (ազգային ողբերգություն), 1904, 119 էջ: Տագնապը (ազգավեպ), 1904, 173 էջ: Ուխտը (ազգային ողբերգություն), 1905, 96 էջ: Փառանձեմ (ազգային ողբերգություն), 1913, 26 էջ:

⁵¹ Հ. Գ ա գ ա ն ճ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 205:

⁵² Ս. Ե Ր Ե Մ Յ Ա Ն. Կենսագրություն Իգնատիոս Վարդապետի Կյուրեղյանի. Վենետիկ, 1904:

սերը. Եղիշե, Խորենացի ու Եղնիկ կը բանա աշակերտին առջև: Բազրատունյան գրաբարով մշակված, զտրվացած վարժապետը՝ Արծրունին հրապուրիչ կրնես Մեսրոպյան լեզուն»⁵³:

Ս. Երեմյանի ղեկավարվածական գործերից «Տաղնապն» արժանացել է գրականագիտական մերժումներին: «Սիմոն Երեմյանի «Տաղնապն» մեկի հերոսները կոչված են մեծ առաքելության՝ հայկական խաղաղամաս շրջաններում շուտափոքության ասարածման միջոցով հասարակության բարեկեցության հասնելու գործնական մասնակցությանը: Վեպի գլխավոր հերոսներն՝ Վահրամի և Հայկանուշի փոխադարձ սիրո և կյանքի զխաղաղ նպատակը ազգապահպանման գործին նվիրվելն է: Երիտասարդները առողջված են մի ընդհանուր գաղափարով՝ իրենց սաացած գիտելիքներն ու կյանքի հետագա ընթացքը նվիրաբերել, ի նպատակ դնել ազգային շահախնդրություններին և հասարակության բարեկարգմանը»⁵⁴:

Սիմոն Երեմյանի գիտական ժառանգության անբախտելի մասն է նրա XI III գ. հայ բժիշկ Մանուկ Պոնտացու⁵⁵ «Մարդակազմություն» ցարդ ձեռագիր ուսումնասիրությունը նվիրված «Լարդակազմություն Մանուկ Պոնտացու» աշխատությունը⁵⁶: Շարունակելով իր ավագ գործընկերների հայ բժշկագիտության պատմության էջերը գիտական նորանոր նորություններով հարստացնելու ազգանվեր գործը, Սիմոն Երեմյանն իր արժանի նպատակ է բերել հայ բնագիտության պատմության նշված բնագավառին:

XX գ. սկզբին Սիմոն Երեմյանին մեծապես հուզել է սեռականություն չունեցող հայրերի համար Եվրոպայի խոշորագույն քաղաքներից մեկում հայկական մշակույթի մի հզոր կենտրոն ստեղծելու գաղափարը. «Ուրիշ ծրագիր մը, որուն վրա Հ. Ս. Երեմյան խմբագրական մը հրատարակած է «Բազմապն»-ի վերջին թվին մեջ, և որ այդ վերջնական լուծումին պորտալս աջակցելու կարող կրնա բլլալ Եվրոպական մեծ կենտրոնի մը սեղ ազգային մասնաբաժան հզոր հաստատություն մը հիմնարկումն է»⁵⁷:

Լեոն իր նշանավոր «Մխիթար և Մխիթարյաններ» ուսումնասիրությունում, խոսելով Վենետիկի Մխիթարյանների մասին, ի մասնավորի նշել է. «Հայտնի է, թե ինչ ահագին գեր է կատարել Մխիթարյան միաբանությունը հայ ազգի մեջ: Վատահ կարելի է ասել, որ մի ամբողջ դար, մինչև XIX դարի կեսը, դա միակ հիմնարկությունն էր, որ լույս ու պատվություն էր մատակարարում հայերին (ընդգծումը՝ Ա. Փ.): Մի անօրինակ բեղմնավոր

⁵³ Նույն տեղում, էջ 10

⁵⁴ Ն. Ա. Ե. Ե. Ե. Արեմտահայ վիպերություն. Երևան, 1992, էջ 241: Տե՛ս նաև Ե. Ա. Ե. Ե. Ե. Критические взгляды Симона Еремяна. – "Литературная Армения", 1980, №4, с. 94, 97.

⁵⁵ Մանուկ Պոնտացու «Մարդակազմություն» և «Դեղերի ժողովածու» բժշկական ձեռագրերը Վենետիկի Մխիթարյան միաբանության մասնաբաժանում են: «Մարդակազմությունը» 113 թերթ է և գրված է 1757 թ. Էրիմի Կաֆա (այժմ՝ Թուրքիա) քաղաքում: Հիշյալ աշխատությունն երեք մասից է: Առաջինում խոսվում է թանկագին քարերի մասին, երկրորդում՝ մարդու անատոմիայի և առողջապահության, երրորդում՝ դեղերի մասին (տես Ա. Ա. Ե. Ե. Ե. Ե. Հայ ժողովրդի մասնաբաժան մշակույթի գաղափարն պատմություն, հ. II, Երևան, 1962, էջ 420):

⁵⁶ Ս. Ե. Ե. Ե. Ե. Մարդակազմություն Մանուկ Պոնտացու. Վենետիկ, 1921:

⁵⁷ Ա. Չ. Ե. Ե. Ե. Ե. Կացություն. – «Անահիտ», 1904, հունվար, էջ 24

դրական գործունեությունը Սուրբ Ղազարի վանքը դարձավ մի երևույթ, որի նմանը չէ տեսել մեր պատմությունը»⁵⁸:

Լիովին համամիտ լինելով վերն ասվածին հավելենք, որ XIX դ. երկրորդ կեսին և XX առաջին քառորդին ևս Վենետիկի Մխիթարյանները շարունակում էին իրենց գիտական սրբազան ազգանվեր առաքելությունը, և Միմոն երեմյանը հիշյալ ժամանակահատվածի Մխիթարյան միաբանության գիտություն և մշակույթի չարքաշ սերմնացաններից մեկն էր:

НАУЧНОЕ И ЛИТЕРАТУРНОЕ НАСЛЕДИЕ СИМОНА ЕРЕМЯНА

АСАТУР ПАШАЯН

Резюме

Впервые вниманию широкого круга читателей представлена биография, научно-педагогическая деятельность видного армянского естествоведа, педагога, литературоведа, писателя, редактора и эстетика, члена Венецианской конгрегации мхитаристов Симона Еремяна (1871 – 1938). С. Еремян родился в Трапезунде. Образование получил в школе при монастыре конгрегации мхитаристов в Венеции, на острове св. Лазаря. В 1916 – 1918 и 1920 – 1921 годах был директором Венецианского колледжа Мурад-Рафаелян. Был также директором типографии мхитаристов на острове св. Лазаря. Автор более 30 книг: естествоведческие учебники, энциклопедии, художественные произведения, биографии, литературно-театральные статьи, эстетические произведения. Энциклопедия "Иллюстрированный словарь практических наук" (Венеция, 1900, 835 стр.) написана на ашхарабаре и является вершиной естествоведческого наследия С. Еремяна. На ашхарабаре написаны также иллюстрированные учебники "Новая зоология и антропология" (Венеция, 1896, 552 стр.) и "Новая минералогия" (Венеция, 1898, 175 стр.). В 1899 – 1905 годах С. Еремян был редактором журнала "Базмавеп", а в 1901 г. – журнала "Гегуни". В 1913 – 1934 гг. в Венеции он издал 10-томник "Национальные личности, образованные армяне" – своеобразную литературную энциклопедию, где приведены биографии около 100 видных деятелей армянской культуры: Месроп Маштоц, Нагапет Кучак, Саят-Нова, Мхитар Себастиани, Хачатур Абовян, Микаел Налбандян, Раффи, Гевонд Алишан, Петрос Дурян и др. Книга С. Еремяна "Биография Г. Алишана" (Венеция, 1902, 208 стр.) первое литературоведческое произведение, посвященное Г. Алишану. Среди научного наследия особое место занимает книга "Литературная история и Прекрасное" (Венеция, 1915, 304 стр.), которая является первой монографией на армянском языке, посвященной эстетике. Представляют некоторый художественный интерес рассказы, стихотворения, романы и пьесы С. Еремяна "Проклятие", "Сатеник", "Тревога", "Парандзем", "Клятва" и др.

⁵⁸ Լ և ո. Երկերի ժողովածու, Հ. 5, Երևան, 1986, էջ 360:

THE SCIENTIFIC AND LITERARY HERITAGE
OF SIMON YEREMYAN

ASATUR PASHAYAN

S u m m a r y

The paper deals with the biography, scientific-pedagogic activity of the prominent Armenian scientist, pedagogue, specialist of Literature, writer, editor, aesthete and member of the Mekhitarist Congregation of Venice Simon Yeremyan (1871-1938). Simon Yeremyan was born in Trabzon. He was educated at monastery school of the Mekhitarist Congregation in Venice, on the island of St. Lazarus. In 1916-1918 and 1920-1921 he was the director of Murad Rafayelyan College in Venice. He was the director of Mekhitarist's printing house on the island of St. Lazarus. He is the author of more than 30 monographs: scientific text-books, encyclopaedias, works of art, biographies, literary-dramaturgical articles and aesthetic works. The encyclopaedia "Illustrative Dictionary of Practical Sciences" (Venice, 1900, 835 p.) is written in Ashkharabar and is considered a masterpiece of S. Yeremyan's scientific activity. His illustrative text-books are written in Ashkharabar as well as "New Zoology and Anthropology" (Venice, 1896, 552 p.) and "New Mineralogy", (Venice, 1898, 175 p.). In 1899-1905 Simon Yeremyan was the editor of "Bazmavep", in 1901 – the editor of "Geghouni". In 1913-1934 S. Yeremyan published "The National Individuals, the Intelligent Armenians" – an original literary encyclopaedia (10 volumes), representing biographies of more that 100 prominent Armenians, like Mesrop Mashtots, Nahapet Kouchak, Sayat-Nova, Mekhitar Sebastatsi, Khachatour Abovyan, Mikael Nalbandyan, Raffi, Ghevond Alishan, Petros Douryan, etc. S. Yeremyan's monograph "The Biography of Gh. Alishan" (Venice, 1902, 208 p.) is the first work devoted to Gh. Alishan. Among the scientific heritage a special role occupies "The Literary History and the Beauty" (Venice, 1915, 304 p.), which is the first monograph devoted to aesthetics in Armenian. S. Yeremyan's stories, poems, novels and plays represent some artistic interest. Among them are: "The Curse", "Satenik", "Trouble", "Parandzein", "Oath", etc.